

Արմենուհի Վ. Ղամբարյան

Պատմ. գիտ. թեկնածու

**ԱՄՆ–Ի ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ
ՌԱԶՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴԻՐՄԱՆ ՀԱՐՅԸ
1919 ԹՎԱԿԱՆԻՆ^{*}**

Բանալի բառեր – Հայաստանի Հանրապետություն, ԱՄՆ, նախագահ, վարչապետ, գորավար, սենատոր, Սենատ, բանաձև, լսումներ, քաղաքականություն, խաղաղություն, մանդատ, առաքելություն, վեհաժողով, հանձնաժողով, Ազգերի լիգա:

Մուտք

Առաջին աշխարհամարտում Անտանտի երկրների հաղթանակը մեծ հույսեր ներշնչեց նորաստեղծ Հայաստանի Հանրապետությանն ու աշխարհասփյուռ հայությանը: Հանրապետության ղեկավարներն ակնկալում էին պատերազմից հետո օգտվել լիիրավ դաշնակցի կարգավիճակից և հասնել բաղձալի արդարությանը՝ հայկական հողերի ազատագրմանն ու միացյալ և անկախ Հայաստանի ստեղծմանը: Հայությունն անհամբեր սպասում էր հետպատերազմյան աշխարհի խնդիրների կարգավորմանը միտված Փարիզի վեհաժողովի որոշումներին՝ հույս ունենալով, որ դաշնակիցները, ըմբռնելով հայ ժողովրդի տառապանքներն ու ահռելի կորուստները և գնահատելով նրա ռազմական ներդրումը հաղթանակի գործում, հնարավորություն կատեղծեն Հայկական հարցի արդարացի լուծման համար: Խնդիրը ոչ միայն արևմտահայերի, այլև ողջ հայ ժողովրդի իրավունքների պաշտպանությունն էր ու ամբողջական Հայաստանի անկախության ճանաչումը:

Ուստի Մուդրոսի զինադադարին հաջորդած դաժան ձմռան ամիսները՝ 1918 թ. վերջն ու 1919 թ. սկիզբը, իրականում չափազանց սպասումալից էին հայ ժողովրդի համար: Հայության մեծ մասը վստահ էր, որ Հայաստանը

^{*} Հոդվածն ընդունվել է տպագրության 28.11.2021:

տանի ազատագրման ու վերականգնման գործում գլխավոր դերը կատանձնի Ամերիկայի Միացյալ Նահանգները:

1. Հայկական խնդիրներն ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ Փարիզի խաղաղության վեհաժողովի առաջին փուլում

1919 թ. ձմռանն ու գարնանը՝ Փարիզի խաղաղության վեհաժողովի աշխատանքների ընթացքում, Հայաստանի Հանրապետությունը շարունակում էր մնալ տնտեսական ու ռազմաքաղաքական չափազանց ծանր դրության մեջ: Անկախության հռչակման առաջին իսկ օրից ՀՀ կառավարության առանցքային խնդիրներից էին պետության անվտանգությունը՝ արտաքին և ներքին թշնամիներից երկրի պաշտպանությունը, ժողովրդի ֆիզիկական գոյության ու պարենավորման ապահովումը: Ի վիճակի՞ էր արդյոք նորաստեղծ հանրապետության կառավարությունն ինքնուրույն իրականացնելու այդ ամենը: Պատասխանը հստակ էր՝ ո՛չ, և դրանում համոզվելու համար կարիք չկար սպասելու հետագա զարգացումների: Երկրի վերականգնումը, ինչպես և գաղթականների խնդրի լուծումն ու հայրենադարձությունը, անհնար էր առանց հաղթական տերություններից մեկի կամ մի քանիսի օգնության: Ուստի ՀՀ վարչակազմն աստիճանաբար իր հույսերը կապում էր ԱՄՆ-ի հետ: Այդ վստահությունը հիմնված էր ամերիկացի ժողովրդի կողմից հայության նկատմամբ համակրանքի երկարատև դրսևորման, Կոնգրեսում երկկուսակցական օժանդակության և Վ. Վիլսոնի այն ամուր համոզման վրա, որ Հայաստանի պաշտպանությունը «քաղաքակրթության սրբազան պարտքն է»¹: Մակայն շուտով՝ Խաղաղության վեհաժողովի աշխատանքների ընթացքում, պարզվելու էր, թե որքանով էր այդ քաղաքակրթությունը, որը նախկինում արդեն բազմաթիվ անգամներ անտեսել էր իր սրբազան պարտքը, համաշխարհային խնդիրների հետպատերազմյան կարգավորումների շրջանակներում կատարելու այդ առաքելությունը:

Վեհաժողովի մեկնարկի ձգձգման պայմաններում դաշնակիցները, ելնելով իրենց աշխարհաքաղաքական շահերից, սկսեցին ետին պլան մղել հայերի ճակատագրի հանդեպ իրենց մտահոգություններն ու տված խոստումները բազմաբնույթ օգնություն տրամադրելու վերաբերյալ: Ո՛չ արևմտահայության և ո՛չ էլ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչները

¹ Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն, հատ. II: Վերսալից-Լոնդոն, 1919-1920, Եր., 2014, էջ 377:

րին անգամ հնարավորություն չտրվեց անմիջականորեն մասնակցելու Փարիզի խաղաղության վեհաժողովի աշխատանքներին:

ԱՄՆ-ի դիրքորոշումներն այս դեպքում գրեթե չէին տարբերվում մյուս տերությունների դիրքորոշումներից: Ավելին՝ եթե դաշնակիցները բացահայտորեն հեռու էին մնում հայկական խնդիրների լուծումից և դա թողնում էին ԱՄՆ-ին՝ նրան առաջարկելով Հայաստանի մանդատը, ապա ԱՄՆ-ն հանդես էր գալիս հակասական դիրքորոշումներով. մի կողմից՝ հայ ժողովրդին ազատ ու անկախ տեսնելու շահագրգռվածությամբ, մյուս կողմից՝ հայության հանդեպ, մասնավորապես մանդատի հարցում, «պասիվ» և «անորոշ» քաղաքականությամբ: ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը մի կողմից հայտարարում էր, որ «եթե Ամերիկյան որևէ մանդատ հանձն առնի, այդ կլինի Հայաստանը», մյուս կողմից պատրաստ էր պաշտպանելու հնարավոր այնպիսի տարբերակ, որով «Անգլիան կամենար գրավել, իր կամ Հայ Հանրապետության գորքերով, Թուրքահայ գավառները»²: Սա այն դեպքում, երբ բրիտանացիները ամենևին էլ չունեին նման մտադրություն: 1919 թ. մարտի 27-ին Փարիզում Խաղաղության վեհաժողովի բրիտանական պատվիրակության անդամ, արևելյան գործերի գլխավոր վարիչ Լուի Մալեթն ասել էր հայկական երկու պատվիրակությունների նախագահներ Ա. Ահարոնյանին և Պողոս Նուբարին. «Ես ամերիկացիների դիրքը լավ չեմ հասկանում. չորս կողմում խոսում են, թե Ամերիկյան է լինելու Հայաստանի հովանավորը, իսկ ուզում են, որ մենք գրավենք Հայաստանը: Ոչ, ես վճռապես ասում եմ, մենք անկարող ենք: Խնդրեցեք ամերիկացիներին. մենք զինվոր չունենք»³:

1919 թ. գարնանն ու ամռան սկզբին ԱՄՆ-ի վերոնշյալ պասիվ քաղաքականությունը, Խաղաղության վեհաժողովում նախագահ Վ. Վիլսոնի ձեռնպահությունն ու Հայաստանի մանդատի վերաբերյալ հաստատապես պարտավորություն չստանձնելը այնպիսի պահի, երբ հայամետ հանրային կարծիքն ԱՄՆ-ում իր գագաթնակետին էր, հետ պահեցին մանդատի կողմնակից ամերիկացի հասարակական և քաղաքական բազմաթիվ գործիչներին լայնածավալ գործողություններ իրականացնելուց: Այդ քաղաքականությունը ցավալիորեն նպաստեց նաև պարտված Թուրքիայի դիրքերի աստիճանական ամրապնդմանը:

Ըստ ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի և պետական քարտուղար Ռ. Լանսինգի՝ մանդատի վերաբերյալ քայլերի ձեռնարկումն անժամանակ էր մինչև Գերմանիայի հետ Վերսալի հաշտության պայմանագրի վավերացումը Սենատի կողմից: Վ. Վիլսոնը իր հերթին ամեն կերպ հետաձգում էր արևելյան խնդիրների լուծումը Խաղաղության վեհաժողովում՝ առաջնությունը

2 **Ահարոնյան Ա.**, Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, քաղաքական օրագիր 1919-1927, Եր., էջ 18-19:

3 Նույն տեղում, էջ 19:

տալով Եվրոպային և Ազգերի լիգային: Բացի այդ՝ նշված ժամանակահատվածում ԱՄՆ նախագահը հրաժարվում էր մասնակցել դաշնակիցների ծրագրերին և միջոցներ կամ ռազմական ուժ հատկացնել Օսմանյան կայսրությունում և Անդրկովկասում կարգուկանոն պահպանելու համար⁴: Շուրջ երեք ամիս էր հարկավոր՝ 1919 թ. փետրվարի 8-ից մինչև մայիսի 6-ը, որ ԱՄՆ նախագահը պատասխանի դաշնակիցների այն պահանջին, որ Ամերիկյան նույնպես պետք է Մերձավոր Արևելքում ստանձնի կայագործների տեղակայման պարտավորությունը: Ռազմական նախարար Ն. Դ. Բեյքերի օգնությամբ Վ. Վիլսոնը, հիմք ունենալով այն հանգամանքը, որ Միացյալ Նահանգները պատերազմ չէր հայտարարել Օսմանյան կայսրությանը, «հիմնավորված» մերժում էր պատրաստել համապատասխան ուժեր: Նման մոտեցման բարձրաձայնումը հաջորդեց Փարիզի վեհաժողովի 1919 թ. մայիսի 5-ի նիստում Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Զորջի այն առաջարկին, ըստ որի՝ ԱՄՆ-ն Եվրոպայում գտնվող իր գործերը պետք է տեղափոխեր Կ. Պոլիս՝ այնտեղից Արևմտյան Հայաստան ուղարկելու համար, որպեսզի անգլիացիներն իրենց գործերը դուրս բերեին Անդրկովկասից⁵: ԱՄՆ նախագահը «ցավով» հայտնեց, որ իրավական հարցերով իր խորհրդականները հաղորդել են իրեն, որ ինքը որևէ արտոնություն չունի գործեր ուղարկելու Թուրքիա⁶: Վ. Վիլսոնը նշում էր, որ, անկախ իր ջանքերից, օրենքը որոշակի է ԱՄՆ-ից դուրս գործերի օգտագործման հարցում: Այդուհանդերձ, նա պատրաստակամություն էր հայտնել նման արտոնություն խնդրելու Կոնգրեսից, երբ Գերմանիայի հետ հաշտության պայմանագիրը, որը ներառելու էր Ազգերի լիգայի կանոնադրությունը, ներկայացվեր օրենսդիր մարմնին՝ վավերացման համար: ԱՄՆ նախագահի ցանկությունն էր, որ Միացյալ Նահանգները կարողանար Ազգերի լիգայի հովանու ներքո օգնել Մերձավոր Արևելքին ընդհանրապես և Հայաստանին մասնավորապես:

Այդ նույն ժամանակ ԱՄՆ նախագահը հայտարարել էր նաև, որ իր երկիրը հարյուր հազարավոր զինվորներ չի տեղափոխի օսմանյան սահմաններ, և Անտանտի երկրներն ազատ են իրենց գործերը ետ քաշելու կամ փոխարինելու, ինչպես հարկ կհամարեն⁷:

Այդուհանդերձ, տարածաշրջանում ռազմական ուժերի տեղակայման փոփոխությունները լրջորեն և անմիջականորեն ազդում էին տեղի բնակչության ու պետական կազմավորումների և հաղթանակած տերությունների միջև հարաբերությունների, ինչպես նաև մանդատային քաղաքակա-

4 Տե՛ս Evans L., United States Policy and the Partition of Turkey, 1914-1924, Baltimore, 1965, էջ 105, Հովհաննիսյան Ռ. Գ., նշվ. աշխ., էջ 332, Махмурия Г. Г., Армения в политике США 1917-1923 гг., Ер., 1918, էջ 83:

5 Տե՛ս Գալոյան Գ. Ա., Հայաստանը և Մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999, էջ 200:

6 Տե՛ս Papers Relating to the Foreign Relations of the United States. 1919. The Paris Peace Conference, vol. V, Washington, 1946, էջ 482:

7 Տե՛ս Махмурия Г. Г., նշվ. աշխ., էջ 70:

նության ձևավորման վրա: Սույն հարցերի, մասնավորապես մանդատի ստանձնման վերաբերյալ ամիսներ տևած քննարկումների ընթացքում Խաղաղության վեհաժողովի ամերիկյան պատվիրակությունը՝ նախագահ Վ. Վիլսոնի գլխավորությամբ, որևէ հստակ դիրքորոշում չէր դրսևորում: Այդ առումով իր օգտակարությամբ չէր առանձնանալու նաև 1919 թ. հունիս-հուլիս ամիսներին Վ. Վիլսոնի նախաձեռնությամբ վեհաժողովի կողմից Մերձավոր Արևելք ուղարկված՝ Քինգ-Քրեյնի փաստացի միակողմանի ամերիկյան հանձնախումբը:

Նշված ժամանակահատվածում ԱՄՆ-ի քաղաքականությունը հայերի հանդեպ շարունակում էր կրել միմիայն մարդասիրական բնույթ և սահմանափակվում էր նպաստամատույց գործունեությամբ: Ընդգծելով այդ գործունեության անգնահատելի դերը՝ նշենք, սակայն, որ այն որևէ կերպ չէր թեթևացնում ՀՀ-ի համար ստեղծված ռազմաքաղաքական ծանր դրությունը, քանզի քաղաքական և ռազմական հարցերը դուրս էին մնում նպաստամատույց ծառայությունների ոլորտից:

2. Իրադրությունը Հայաստանում և ԱՄՆ-ի ռազմական միջամտության անհրաժեշտությունը 1919 թ. ամռանը

1919 թ. հունիսի 28-ին Վերսալում կնքված պայմանագրի վավերացման շուրջ հուլիս-օգոստոս ամիսներին ԱՄՆ-ում ընթացող բանավեճերի պայմաններում Կովկասում ծառայող ամերիկյան նպաստամատույցի, հյուպատոսությունների, հետախուզության աշխատակիցները չէին դադարեցնում իրենց ահազանգերը: Նրանք ոչ միայն ցավալի տեղեկություններ էին հայտնում, այլև, անընդմեջ արտահայտելով իրենց մտահոգություններն ու դիտարկումները, խնդրանքներ էին հղում ամերիկյան պետական կառույցներին՝ ԱՄՆ-ի ռազմական միջամտության անհրաժեշտության վերաբերյալ: Նրանք տեղեկացնում էին, որ բրիտանացիների ռազմական նահանջի հետևանքով ստեղծված ծանր պայմաններից և մուսուլմանական ապստամբություններից Հայաստանը կարող էր փրկել միայն ամերիկյան միջամտությունը, այն է՝ Հայաստան ամերիկյան փոքրաթիվ զորք ուղարկելը:

Նշենք, որ հայությանը ցնցել էր Անդրկովկասից բրիտանական զորքերի դուրսբերման լուրը: ՀՀ կառավարության՝ բրիտանացիներին հղած՝ զորքերը դուրս չբերելու, հայկական զորքին ռազմական հանդերձանքով ու զինամթերքով օգնելու վերաբերյալ խնդրագրերն ու դիմումները ոչ մի արդյունք չէին ունեցել: 1919 թ. հունիսի 19-ին ռազմական աջակցության խնդրանքով ՀՀ կառավարությունը դիմումնագիր է հղում նաև Փարիզի

խաղաղության վեհաժողովին, սակայն այն անպատասխան է մնում: Անպատասխան են մնում նաև դրան հաջորդած նոր ձեպագրերը և օգոստոսի 6-ին վեհաժողովի նախագահին ուղղված պաշտոնագիրը⁸:

Ռազմական օգնության դիմումները մերժվեցին նաև Ֆրանսիայի կողմից: «Բարիզի Պատուիրակությունները գէնք ու ռազմամթերք խնդրած էին ֆրանսական կառավարութենէն Հ. Հանրապետութեան պաշտպանութեան համար ու մերժուած էին, իբրեւ թէ Հայաստանի կառավարութիւնը տակաւին տըֆաքթօ ճանչցուած չէր պետութիւններէ»⁹:

Կովկասից բրիտանական զորքերի դուրսբերման հետևանքով Հայաստանում ստեղծված ծանր դրությանն անդրադառնալով՝ Կ. Պոլսի «Արագած» շաբաթաթերթը տպել էր Ամերիկայի Հայ ազգային միության կողմից լորդ Զ. Բրայսին ուղարկված հեռագրի պատճենը, որում ասվում էր. «Հաղորդուած այն լուրը, թէ բրիտանական կառավարութիւնը իր զինուորները ետ կը քաշէ Անդրկովկասէն, չափազանց ահաբեկում կը պատճառէ մեզի: Մենք չենք կրնար հասկնալ, թէ՛ Հայաստանի պաշտպան կառավարութիւն մը ինչու այս տեսակ քայլ մը պիտի առնէ, որուն արդիւնքը վերապրող հայերուն բնաջնջումը կը նշանակէ: Մենք կը դիմենք ձեզի, որպէս զի դուք ձեր ազդեցիկ ձայնը բարձրացնէք այդ տեսակ աղէտաւոր քայլի մը դէմ»¹⁰:

Ստեղծված ծանր պայմաններում, երբ հայության միակ հույսը մնում էր ԱՄՆ-ն, Հայաստանին փոքրաթիվ զորք տրամադրելու ամերիկյան դիվանագիտական ծառայողների առաջարկները համալրեց ԱՄՆ սենատոր Ուիլյամ Քինգի՝ օգոստոսի 1-ին Սենատին ներկայացրած N 147 բանաձևը: Բանաձևում կոչ էր արվում դաշնակից և միավորված տերություններին հիշելու և կատարելու հայ ժողովրդին ազատագրելու իրենց խոստումները, ստիպելու թուրքերին դուրս գալ հայկական վիլայեթներից, հայերին տրամադրելու գէնք ու զինամթերք, որպեսզի ձևավորվեր գործուն կառավարություն, և վերահսկողություն հաստատվեր «ազգային (իմա՝ հայկական) տարածքների» վրա¹¹: Սակայն հարցի շուրջ սկսված քննարկումներն արդյունավետ չեղան. ոչ մեծաթիվ զորքի տրամադրման այս առաջարկը չընդունվեց ԱՄՆ կառավարության կողմից:

Այնուամենայնիվ, Ուիլյամ Քինգի բանաձևի ներկայացման օրը Վ. Վիլսոնը, հայերի համար որևէ բան անելու ձգտումից ելնելով, ստորագրեց գեներալ Զ. Հարբորդի առաքելությունը Մերձավոր Արևելք, այդ թվում՝ Հայաստան, ուղարկելու որոշումը: Այդ օրերին նախագահը նաև Թուրքիայի կառավարությանը հղեց իր խիստ նախագգուշացումը հայերի դեմ նոր

8 Տե՛ս **Գալոյան Գ. Ա.**, նշվ. աշխ., էջ 172, **Վիրաթյան Վ.**, Հայկական բանակի համար զենք-զինամթերքի հայթայթումը 1918-1920 թթ., «Պատմություն և մշակույթ», Եր., 2019, N 2, էջ 98:

9 **Ճիզնեճյան Մ. Գ.**, Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց (1890-1925), Ֆրեզնո, 1930, էջ 416:

10 «Արագած», Կ. Պոլիս, 1919, 28 սեպտեմբերի, N 36, էջ 480:

11 Տե՛ս United States Congress, Senate Resolution 147, Congressional Record, 66th Congress, 1st Session, Washington, 1919, vol. LVIII, pt. 4, էջ 3476, 3483-3484; Journal of the Senate, 66th Congress, 1st session, Washington, 1919, էջ 154:

բռնությունների առնչությամբ¹²: Պետական քարտուղարության միջոցով Վ. Վիլսոնը փորձում էր նաև համոզել բրիտանացիներին գործքն ամբողջությամբ դուրս չբերել Կովկասից¹³: Ի պատասխան այդ ամենի՝ Ֆրանկ Լ. Փոլքը, ով այդ փուլում ղեկավարում էր Փարիզում ամերիկյան պատվիրակությունը, տեղեկացրեց Վաշինգտոնին, որ որպես հայկական ձգնաժամի լուծում ավելի նպատակահարմար էր Կոնգրեսից 10.000-անոց զորք ուղարկելու արտոնություն ստանալ՝ դեպի Երևան տանող ճանապարհները բաց պահելու նպատակով¹⁴: Իր հերթին Խաղաղության վեհաժողովի Հինգի խորհրդի կողմից Հայաստանի կոմիսար՝ միջդաշնային բարձրագույն հանձնակատար նշանակված ամերիկացի գնդապետ Ուիլյամ Հասկելը, ով արդեն Հայաստանում էր, հեռագրում էր ամերիկյան վարչակազմին, որ ընդամենը հետևակային մեկ գումարտակ կարող է տարբերություն մտցնել գոյատևման և բնաջնջման միջև¹⁵:

1919 թ. օգոստոսի 20-ին՝ Երևան ժամանելուն պես, գնդապետ Հասկելը հավաստիացնում էր ՀՀ կառավարությանը, որ Հայկական հարցի լուծումը որևէ կասկած չի հարուցում. «...վճռված-վերջացած խնդիր է. մնում է միայն որոշել սահմանները և հոգատար պետությունը»¹⁶: Միևնույն ժամանակ, անդրադառնալով հայությանը հուզող՝ երկրի ապահովության ու դաշնակիցների օգնության հարցին, բացատրում էր, որ մինչև չվավերացվի Վերսալի հաշտության պայմանագիրը, չընդունվի Ազգերի լիգան, մանդատի հարցը չի կարող լուծվել: Այդուհանդերձ, նա նշում էր, որ տվյալ պահին «հարկավոր է այժմեւ իսկ մտածել՝ ինչպե՞ս օգնել հայ ժողովրդին: Կասկած չկա, որ մեզ անհրաժեշտ է գինված ուժ՝ ապահովելու համար հայ ժողովրդի գոյությունը: Մեզ հարկավոր է զորք՝ պաշտպանելու համար այն ժամանակավոր սահմանները, որոնք ցույց են տրված մեզ»¹⁷:

1919 թ. ամռան վերջին-աշնան սկզբին, քանի դեռ խնդրո առարկայի շուրջ կարծիքների փոխանակում էր կատարվում, իսկ ԱՄՆ-ն շարունակում էր քաղաքական «պասիվություն» դրսևորել, հայության վիճակն Անդրկովկասում գնալով վատթարանում էր. սաստկացել էին հակահայկական տրամադրությունները, և վերսկսվել հայերի կոտորածները: Ռազմական օգնություն ցուցաբերելու փոխարեն ԱՄՆ-ն ամեն կերպ փորձում էր ետ պահել բրիտանացիներին նահանջից և հայերին սպառնացող կոտորածների վտանգը կանխել բրիտանական զորքի միջոցով¹⁸: Երբ բրիտանացիները

12 Տե՛ս Արմենիա в документах Государственного департамента США 1917-1920 гг. (այսուհետ՝ Армения в документах), Сост. и пер. Махмурия Г. Г., Ер., 2011, էջ 190, 194:

13 Տե՛ս նույն տեղում, էջ 195-196:

14 Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., նշվ. աշխ., էջ 444:

15 Տե՛ս United States National Archives, Washington D.C., Record Group 59, 860J.01/96 (այսուհետ՝ US NA, RG),

Հովհաննիսյան Ռ. Գ., նշվ. աշխ., էջ 445:

16 Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1998, էջ 321:

17 Նույն տեղում, էջ 322:

18 Տե՛ս US NA, RG 256, 181.9402/1:

րը, այնուամենայնիվ, որոշեցին դուրս բերել իրենց զորքերն Անդրկովկասից¹⁹, ԱՄՆ կառավարությունը փորձում էր անել հնարավորը, որ նրանք փոխարինվեն ֆրանսիական զորքերով²⁰: Իսկ երբ օգոստոսի 1-ին Փարիզում դաշնակից երկրների պատվիրակությունների խորհրդին Ֆրանսիայի վարչապետ Ժ. Կլեմանսոն հարց բարձրացրեց ամերիկյան գործողության հնարավորության մասին, ամերիկյան պատվիրակության ղեկավար Ֆրանկ Փոլքը պատասխանեց, որ քանի դեռ նախագահը ծրագրում է Կոնգրեսին խնդրել ստանձնել Հայաստանի մանդատը, Միացյալ Նահանգներն այդ ընթացքում չի կարող ռազմական միջամտության դիմել մի երկրում, որի հետ նա պատերազմի մեջ չի մտել:

Այսպիսով, թեպետև Վ. Վիլսոնը հավաստիացնում էր և՛ դաշնակիցներին, և՛ հայությանը, և՛ ամերիկյան հայամետ կազմակերպություններին, թե խորապես մտահոգված է հայ ժողովրդի ճակատագրով և հույս ունի, որ Կոնգրեսը կհամաձայնի ստանձնել Հայաստանի խնամատարությունը, իրականում ԱՄՆ վարչակազմն ամեն կերպ փորձում էր խույս տալ մանդատ ստանձնող պետությունից ակնկալվող գործողություններից: Նշանակում է՝ ԱՄՆ-ի պետական, ռազմական միջամտությունն ի պաշտպանություն հայերի իրական չէր: **Ամերիկյան պաշտոնական քաղաքականության նման դրսևորումները վկայում էին, որ Հայաստանի մանդատի ստանձնումը քաղաքական առումով նպատակահարմար չէր ԱՄՆ-ի համար, ինչն էլ իր հերթին խոչընդոտում էր վեհաժողովում արևելյան խնդիրների լուծմանը՝ ձգձգելով Թուրքիայի հետ պայմանագրի կնքումը:**

3. ԱՄՆ-ի կողմից Հայաստանի Հանրապետությանը ռազմական օգնության տրամադրման հարցը 1919 թ. աշնանը

Հայաստանի Հանրապետությանը ռազմական օգնություն ցուցաբերելու անհետաձգելիությունն ակնհայտ դարձավ, երբ Կովկասի բրիտանական վերջին զորամասերը ծրագրվածից շուտ՝ 1919 թ. օգոստոսի վերջինսեպտեմբերի սկզբին, հավաքվեցին Բաթումում՝ վերջնական դուրսբերման նպատակով:

Ռազմական օժանդակությունն ապահովելու ուղղությամբ ԱՄՆ-ում ակտիվ աշխատանքներ էր ծավալում Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն (ՀԱԱԿ)՝ Ջեյմս Ուորեն Ջերարդի գլխավորությամբ: Վերջինիս հաջողվեց Սենատի ղեկավար, հանրապետական մեծամասնության առաջ-

19 Տե՛ս US NA, RG 59, 860J.01/ 53, Армения в документах, էջ 200:

20 Տե՛ս US NA, RG 59, 860J.01/82, U.S. Department of State, Papers Relating to the Foreign Relations of the United States, 1919, 2 vols., vol. 2, Washington D.C., 1934, էջ 839, **Գալոյան Գ.**, նշվ. աշխ., էջ 105, 209:

նորդ Հ. Ք. Լոջին համոզել չհակադրվել օրենսդրությամբ Հայաստանում խաղաղության պահպանությանն ուղղված քայլերի արտոնմանը, քանի դեռ այնտեղ դրությունը վերջնականապես չէր կարգավորվել: Ուստի երբ Հայաստանին օգնելու միջոցառումների, մասնավորապես այնտեղ խաղաղության պահպանման վերաբերյալ բանաձև մշակվեց ՀԱՄԿ գործադիր անդամ սենատոր Զ. Շ. Ուիլյամսի գլխավորությամբ, Հ. Ք. Լոջը հայտարարեց, որ այն կքննարկվի Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում:

Զ. Շ. Ուիլյամսի գլխավորությամբ մշակված միացյալ բանաձևը²¹ 1919 թ. սեպտեմբերի 9-ին Սենատին ներկայացրեց փոքրամասնության՝ դեմոկրատների առաջնորդ սենատոր Գ. Մ. Հիչքոքը: Չորս ընդարձակ կետից բաղկացած բանաձևի **առաջին կետում** նշվում էր, որ, ելնելով հայ ժողովրդի հանդեպ ամերիկյան ժողովրդի խոր և անկեղծ համակրանքից, նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ Կովկասից ու Հայաստանից բրիտանական զորքերի դուրսբերումը հայ ժողովրդին անօգնական է թողնելու թուրքերի և քրդերի հարձակումների դեմ, ԱՄՆ Սենատը և Ներկայացուցիչների պալատը վճիռ են կայացնում, որ Հայաստանը (ներառյալ Թուրքահայաստանի վեց վիլայեթները և Կիլիկիան), Ռուսահայաստանը և պարսկական Ադրբեջան նահանգի հյուսիսային մասն ու Տրապիզոնը պետք է անկախ լինեն: Սենատը հույս էր հայտնում, որ հաշտության վեհաժողովը կօգնի Հայաստանին միջոցառումներ ձեռնարկելու անկախ հանրապետություն հիմնադրելու համար:

Բանաձևի **երկրորդ կետը** լիազորում էր ԱՄՆ նախագահին օգտագործել Միացյալ Նահանգների ռազմական և նավատորմային այնքան ուժ, որքան նրա կարծիքով անհրաժեշտ կլիներ Հայաստանում խաղաղության ապահովման համար, մինչև այդ երկրի գործերի կարգավորումն ավարտվեր երկրների միջև պայմանագրով:

Առանձին՝ **երրորդ կետով** նախագահին իրավասություն էր տրվում առկախելու օտարերկրյա զինվորագրման օրենքն այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ էր ԱՄՆ-ի հայերին՝ դրամ, զենք ու զինամթերք հայթայթելու և իբրև զինված ուժեր Փոքր Ասիայի իրենց հայրենակիցներին օգնության հասնելու համար:

21 Բանաձևի տեքստը տես Congressional Record, vol. LVIII, pt. 5, էջ 5067, US NA, RG 256, 867B.00/268, Maintenance of Peace in Armenia. Hearings before Subcommittee of the Committee on Foreign Relations. United States Senate, Sixty-Sixth Congress, First Session on S.J.R.106, (այսուհետ՝ Maintenance of Peace in Armenia) էջ 3, **Hovannisian R. G.**, The Republic of Armenia, From Versailles to London, 1919-1920, vol. II, Berkeley-Los Angeles-London, p. 435; Բանաձևի հայերեն և ռուսերեն թարգմանությունները համապատասխանաբար տես **Հովհաննիսյան Ռ. Գ.**, նշվ. աշխ., էջ 447-448, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. **Զ. Կիրակոսյանի** խմբագրությամբ, Եր, 1972, էջ 566, **Овannisian P. Г.**, նշվ. աշխ., էջ 269:

Բանաձևի **չորրորդ կետը** նախատեսում էր պետական գանձարանից անհրաժեշտ գումար հատկացնել նախագահին՝ վերոնշյալ որոշումն իրագործելու համար:

Ձ. Ուիլյամսի բանաձևի ընդունումը չափազանց կարևոր էր, քանի որ Հայաստանի Հանրապետության համար ակնկալվող ռազմական օգնությունը տվյալ պահին նույնքան անհրաժեշտ էր, որքան Հայաստան ուղարկվող ամերիկյան հումանիտար օգնությունը, մասնավորապես՝ սնունդը: Ուստի դրա անցկացմանը նպաստելու համար անհրաժեշտ էր ԱՄՆ-ում ունենալ Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան գինվորական ներկայացուցիչ, ով կկարողանար ամերիկյան պետական այրերին ձիշտ ներկայացնել Հայաստանում տիրող ռազմական դրությունը, բացատրել, թե զենքի և զինամթերքի ինչ կարիքներ ունի հայկական բանակը, որքան լրացուցիչ ռազմական ուժ է անհրաժեշտ Հայաստանում խաղաղություն և կարգուկանոն ապահովելու համար, և թե ինչպես և որտեղ պետք է օգտագործվեն այդ ուժերը: Ամենակարևորը՝ ենթադրյալ օժանդակության չափերով «ահաբեկված» ԱՄՆ վարչակազմին անհրաժեշտ էր ռազմական մասնագետի հավաստիացում առ այն, որ Հայաստանում կարգուկանոն հաստատելու և օգնություն հասցնող ձանապարհները հսկելու համար անհրաժեշտ էր ընդամենը 10.000–20.000 զորք և ոչ թե 200.000–250.000: Այդ նպատակով 1919 թ. սեպտեմբերի վերջին ՀՀ Փարիզի պատվիրակությունը ծրագրում է ՀՀ առաջին վարչապետ Հովհաննես Քաջազունու գլխավորությամբ ԱՄՆ մեկնող քաղաքացիական առաքելության կազմում որպես գինվորական կցորդ ընդգրկել վեհաժողովի պատվիրակության անդամ գեներալ Հակոբ Բագրատունու: Սակայն հայկական երկու՝ Նուբար փաշայի գլխավորած Ազգային և Ավետիս Ահարոնյանի ղեկավարած ՀՀ պատվիրակությունների համատեղ որոշմամբ ձևավորվում է առանձին՝ Միացյալ Հայաստանի ռազմական առաքելություն՝ Հակոբ Բագրատունու ղեկավարությամբ²²: Որպես Ազգային պատվիրակության հատուկ ներկայացուցիչ ռազմական առաքելության մեջ ընդգրկվել էր զորավար Անդրանիկ Օզանյանը²³:

Թեպետև ռազմական առաքելությունը կոչված էր համալրելու քաղաքացիական պատվիրակությունը, այն վերջինից անշատ է մեկնում ԱՄՆ և բավական ուշ՝ 1919 թ. նոյեմբերի վերջին է հասնում Միացյալ Նահանգներ: Փաստացի հայ բարձրաստիճան գինվորականները հնարավորություն չեն ունենում անմիջականորեն ազդելու բանաձևի անցկացման վրա, քանի որ դրա վերաբերյալ Սենատի ենթահանձնաժողովի լսումներին ներկա չեն

22 Տե՛ս ՀԱՍ, ֆ. 370, ց. 1, գ. 63, թ. 3:

23 Տե՛ս Ուոյն տեղում, թ. 4, **Սիճոնյան Հ Ո.**, Անդրանիկի ժամանակը, երկու գրքով, գիրք Բ, Եր., 1996, էջ 599-600, **Ճիզմեճեան Մ. Գ.**, նշվ. աշխ., էջ 416-417:

գտնվում: Լսումներին ներկա լինելու հնարավորությունից օգտվեցին միայն 1919 թ. հոկտեմբերի 9-ին ԱՄՆ ժամանած ՀՀ քաղաքացիական առաքելության անդամները՝ Հ. Քաջազնունին և Գ. Փաստրմաձյանը:

Ուիլյամսի բանաձևի ներկայացումը և հատկապես Սենատի ենթահանձնաժողովում դրա նախատեսվող քննարկումը ոգևորել էին ոչ միայն հայությանն ու ՀԱԿ անդամներին և նրա նախագահ Զ. Ու. Ջերարդին, այլ նաև ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնին: Սեպտեմբերի 17-ին Վիլսոնը հանձնարարել էր պետական քարտուղար Ռ. Լանսինգին հանդիպել սենատոր Զ. Շ. Ուիլյամսին և ներկայացնել առաջարկ Հայաստան գործեր ուղարկելու նպատակահարմարության վերաբերյալ²⁴: Դա այն դեպքում, երբ գրեթե մեկուկես ամիս առաջ Վիլսոնն այլ դիրքորոշում էր դրսևորել: 1919 թ. օգոստոսի 4-ին նա նույն պետքարտուղարին գրել է. «Վախենում եմ, որ Կանոնադրության (իմա՝ Ազգերի լիգայի) քննարկումների այս փուլում շատ անխոհեմ կլինի Սենատի առջև դնել Հայաստանի մանդատն ստանձնելու առաջարկը և կամ բրիտանացիներին փոխարինելու և ազգաբնակչությանը ժամանակավորապես պաշտպանելու համար այնտեղ ամերիկյան գործ ուղարկելու առաջարկը»²⁵: Բանն այն է, որ, ինչպես փաստում էին ամերիկյան վարչակազմի որոշ ազդեցիկ անդամներ, այդ թվում նաև՝ Սենատի առաջնորդ Հ. Բ. Լոջը, ԱՄՆ նախագահը, իր վրա վերցնելով գործողության պատասխանատվությունը, կարող էր գործերն ուղարկել Հայաստան, եթե հարմար էր գտնում²⁶: Սակայն Վ. Վիլսոնը չէր կամենում միակողմանիորեն գործել և ձգտում էր Կոնգրեսից հատուկ արտոնություն ստանալու: Որպես արդյունք՝ նա կորցրեց Հայաստան փոքրաթիվ ուժեր ուղարկելու հնարավորությունը, ինչով կարող էր հաստատել, որ Հայաստանի պաշտպանության համար անհրաժեշտ չէր 200.000–250.000 զինվոր. դա օգնության հակառակորդների կողմից ուռձացված թիվ էր, որի մասին աղաղակում էր մամուլը²⁷:

Նախագահ Վիլսոնի՝ պատասխանատվություն ստանձնելու անհամարձակությունը հանգեցրեց ԱՄՆ պետքարտուղար Լանսինգի 1919 թ. սեպտեմբերի 20-ի պատասխանին, թե, սենատոր Ուիլյամսի հետ քննելով հարցը, հանգել են այն եզրակացությանը, որ պետք է օրակարգից հանվի Հայաստան գործ ուղարկելու առաջարկը: Պետքարտուղարի փաստարկներն էին. նախ՝ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը դեմ է Հայաստան գործեր ուղարկելուն, և հետո՝ ֆրանսիացիները մտադրություն են հայտնել իրենց գործերն ուղարկելու Հայաստան բրիտանացիների գործերի դուրսբերումից հետո: Ե՛վ սենատորը, և՛ Լանսինգը առա-

24 Տե՛ս **Գալոյան Գ. Ա.**, նշվ. աշխ., էջ 209:

25 US NA, RG 59, 860J.01/26a. Տե՛ս նաև **Հովհաննիսյան Ռ. Գ.**, նշվ. աշխ., էջ 446:

26 Տե՛ս US NA, RG 59, 860J.01/70:

27 Տե՛ս **Գալոյան Գ. Ա.**, նշվ. աշխ., էջ 210, **Հովհաննիսյան Ռ. Գ.**, նշվ. աշխ., էջ 446:

ջարկում էին նախագահին ընդամենն օգնել Հայաստանին զինելու իր բանակը²⁸: Ուիլյամսը հույս ուներ, որ ԱՄՆ-ն կձանաչեր Հայաստանի Հանրապետությունը, թույլ կտար ամերիկահայերին միանալ հայկական բանակին, զենք ու զինամթերք կուղարկեր Հայաստան:

Այնուամենայնիվ, Ուիլյամսի № 106 բանաձևը ներկայացվեց լսումների: Նույնիսկ քննարկումները դեռ չմեկնարկած՝ այն կարծես թե դատապարտված էր տապալման: Այսպես, հակառակ Զ. Շ. Ուիլյամսի համոզմունքին, Հ. Ք. Լոջը սեպտեմբերի վերջերին կարծիք էր հայտնում, որ, հավանաբար, տվյալ պահին Կոնգրեսն անգամ ուշադրություն չի դարձնի զորքեր ուղարկելու հարցին: Բացի այդ՝ այն, որ Հ. Ք. Լոջը չէր առարկել Սենատի ենթահանձնաժողովում Հայաստանին վերաբերող հարցի քննարկմանը, դեռ չէր նշանակում, որ նա չէր խոչընդոտելու այդ հարցի դրական լուծմանը: Որպես արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ՝ Հ. Ք. Լոջը Զ. Շ. Ուիլյամսի բանաձևը քննարկելու համար կազմված ենթահանձնաժողովում նրա հետ միասին ընդգրկեց երկու այնպիսի սենատորների՝ Ուորեն Գ. Հարդինգին և Հարի Ս. Նյուին, որոնք թեպետ արտաքուստ համակրանք էին տածում հայերի հանդեպ, այդուհանդերձ, խնդրո առարկա հարցին վերապահությամբ էին մոտենում:

Բանաձևը ներկայացվեց Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովի լսումներին 1919 թ. սեպտեմբերի 27-ից մինչև հոկտեմբերի 10-ը: Լսումներն ընթացան «Խաղաղության պահպանումը Հայաստանում» խորագրի ներքո²⁹: Սենատոր Ու. Հարդինգի նախագահությամբ չորս նիստերի ընթացքում վկայությամբ հանդես եկան տասներեք անձ, որոնց թվում էին ԱՄՆ-ում հայ համայնքի ներկայացուցիչներ, ԱՄՆ-ի տարբեր առյուծների պետական պաշտոնյաներ՝ ընդհուպ պետքարտուղարի օգնական Ու. Ֆիլիպսը, ամերիկյան միսիոներներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության անդամներ:

Լսումների առաջին օրը ամերիկահայության անունից վկայությամբ հանդես եկան Ամերիկայի Հայ ազգային միության երեք ներկայացուցիչներ՝ միության նախագահ Միհրան Սվազլին (Սվազյան) և Բոսթոնի հայ համայնքի անդամներ՝ հայտնի դրամատեր Մոսես Գուլեսյանն ու իրավաբան Վարդան Մալքոլմը: Ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության՝ հոկտեմբերի 10-ի լսումներին հանդես եկան Վաշինգտոն ժամանած ՀՀ նախկին վարչապետ Հ. Քաջազնունին և որպես Հայաստանի լիազոր՝ դիվանագիտական ներկայացուցիչ ԱՄՆ գործուղված Գարեգին Փաստրնաճյանը (Արմեն Գարոն): ՀՀ ներկայացուցիչների վկայությունները

28 Տե՛ս US NA, RG 59, 860J. 01/82, **Պալոյան Գ. Ա.**, նշվ. աշխ., էջ 210:

29 Լսումների արձանագրությունը տե՛ս Maintenance of Peace in Armenia, էջ 3-125: Նույն նյութը տե՛ս նաև “Armenian Review”, 1980, vol. 33, N 4, էջ 441-443, 1981, vol. 34, N 1, էջ 46-79, N 2, էջ 199-217, N 4, էջ 412-427:

նախատեսված չէին լսումների ձևաչափով և անակնկալ էին ենթահանձնաժողովի համար. Հայաստանի պատվիրակների ունկնդրումը կազմակերպվել էր ՀԱԱԿ նախագահ Զ. Զերարդի միջնորդությամբ: Այդ կապակցությամբ տեղի ունեցավ լսումների չնախատեսված՝ չորրորդ նիստը:

Քանի որ Հ. Քաջագնունու խմբի առաքելության հիմնական նպատակը ԱՄՆ-ից տնտեսական ու քաղաքական աջակցություն ստանալն էր, վերջինիս վկայությունն առավելապես ընդգրկում էր հայ ժողովրդի ազգային, մշակութային, քաղաքական նկարագրի և իրավունքների վերաբերյալ տեղեկություններ: Քաջագնունին վստահեցնում էր, որ Զ. Ուիլյամսի բանաձևով նախատեսվող օժանդակության դեպքում հայերն ի վիճակի կլինեն կազմակերպելու իրենց ինքնապաշտպանությունը, ինչպես նաև սեփական աշխատասիրության ու Հայաստանի բնական պաշարների շնորհիվ կկարողանան վճարել վերցրած վարկերը³⁰:

Գ. Փաստրնաճյանը, համամիտ լինելով Հ. Քաջագնունու վկայություններին, նշեց նաև, որ խնամակալ ԱՄՆ-ի փոքրաթիվ գորամիավորումները Բաթումում և Երևանում շատ ցանկալի են և կարևորագույն դեր կխաղան հենց միայն իրենց ներկայությամբ, քանի որ մեծ տպավորություն կթողնեն առաջին հերթին հենց Հայաստանի հարևանների վրա³¹:

ՀՀ պատվիրակների վկայություններին հաջորդեց մամուլի հայկական գրասենյակի տնօրեն Վ. Քարտաշյանի վկայությունը, ով, սակայն, լսումներին ոչ թե հանդես էր գալիս ամերիկահայ համայնքի անունից, այլ ներկայացնում էր ՀԱԱԿ նախագահ Զ. Զերարդին: Նա ենթահանձնաժողովին հանձնեց վերջինիս հուշագիրը որում նշվում էին ԱՄՆ-ի կողմից Հայաստանին օգնության ցուցաբերման պատճառները: Վ. Քարտաշյանը սենատորներին փոխանցեց նաև Զ. Զերարդի բազմակետ խնդրանքը. միջնորդել, որ Սենատն ընդունի Զ. Շ. Ուիլյամսի բանաձևը, կոչ անել, որ նախագահը ճանաչի Հայաստանի Հանրապետությունը, սնունդ, զորք և զինամթերք ուղարկվեն Հայաստան, հորդորել ամերիկյան կառավարությանը լիազորել ԱՄՆ-ի հայերին հավաքագրելու կամավորներ և օգնելու նրանց փոխադրվել Հայաստան:

Ենթահանձնաժողովն իր աշխատանքներն ավարտեց 1919 թ. հոկտեմբերի 10-ին: Որպես արդյունք՝ ենթահանձնաժողովի անդամ սենատորների համար Զ. Շ. Ուիլյամսի բանաձևի պաշտպանությանն ուղղված հայ և ամերիկացի խոսնակների վկայություններից պարզ դարձավ, որ Հայաստանում

30 Սենատի ենթահանձնաժողովի առջև Հ. Քաջագնունու վկայության մասին տես **Ղանբարյան Ա.**, Հ. Քաջագնունու հաղորդումը ԱՄՆ Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովում (հոկտեմբեր, 1919 թ.), «ՊԲՀ», Եր., «Գիտություն», N 3, էջ 254-261: Տես նաև Maintenance of Peace in Armenia, էջ 209-211:

31 Գ. Փաստրնաճյանի վկայության մասին տես **Ղանբարյան Ա.**, Գ. Փաստրնաճյանի հաղորդումը ԱՄՆ Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովում (հոկտեմբեր, 1919 թ.), «Регион и мир», Ер., 2020, том XI, N 6, էջ 89-93: Տես նաև Maintenance of Peace in Armenia, էջ 211-214:

խաղաղության պահպանման համար անհրաժեշտ է անհապաղ իրակա-
նացնել գործողություններ:

Ենթահանձնաժողովի նախագահ Ու. Հարդինգը 1919 թ. հոկտեմբերի
11-ին իրազեկել էր լսումների մասնակիցներին, որ առաջիկա շաբաթվա
ընթացքում որոշակի քայլեր կձեռնարկի իր եզրակացություններն ու առա-
ջարկությունները ներկայացնելու Սենատի արտաքին հարաբերությունների
հանձնաժողով:

Իսկապես, քննարկվող հարցի կարևորությունը ենթադրում էր անհե-
տաձգելի գործողություններ: Սակայն ենթահանձնաժողովը, մասնավորա-
պես՝ դրա նախագահ սենատոր Ու. Հարդինգը, չնայած տված խոստումնե-
րին, ամենևին էլ չէր պատրաստվում շտապ որևէ որոշում կայացնելու և
գործնական քայլեր ձեռնարկելու: Ամիսներ շարունակ Ու. Հարդինգը
ձգձգեց իր եզրակացությունների և առաջարկությունների ներկայացումը
Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողով: Միայն հաջորդ
տարի՝ 1920 թ. մայիսի 15-ին, Ջ. Շ. Ուիլյամսի՝ հայերին օգնելու և Հայաս-
տանում խաղաղությունը պահպանելու համար ՀՀ գորք ու զինամթերք ու-
ղարկելու բանաձևը ներկայացվեց ԱՄՆ Սենատի լրակազմ նիստին: Ամ-
բողջությամբ ձևափոխված և նախնական իմաստը կորցրած այդ բանաձևը
նույն օրը՝ 1920 թ. մայիսի 15-ին, մերժվեց: Հայաստանին ռազմական օգ-
նության ցուցաբերման մերժումը, անմիջականորեն կապված լինելով Հա-
յաստանի մանդատի հարցի հետ, ազդեց նաև ԱՄՆ-ի կողմից մանդատի
ստանձնման «բնականոն» ընթացքի վրա: 1920 թ. հունիսի 1-ին Սենատը,
ընդունելով Հայաստանին օգնելու անհրաժեշտությունը, այնուամենայնիվ
մերժում է Հայաստանի մանդատի ստանձնումը:

Ամփոփելով նշենք նաև, որ 1919 թ. նոյեմբերի 22-ին ԱՄՆ ժամանած
գորավարներ Անդրանիկն ու Հ. Բագրատունին ի գորու չեղան իրականաց-
նելու ստանձնած հանձնարարականները, մասնավորապես՝ հասնել ԱՄՆ-ի
կողմից ՀՀ ճանաչմանը և ռազմական օժանդակության ապահովմանը: Ա-
ռանձնակի դեր չխաղացին նաև ԱՄՆ-ի բարձրաստիճան պաշտոնյաների,
ամերիկացի հայտնի քաղաքական և հասարակական գործիչների հետ
հանդիպումները, որոնց ընթացքում ներկայացվում էին հայության պա-
հանջներն ու խնդրանքները: Անարդյունք մնացին նաև Հ. Բագրատունու և
Անդրանիկի՝ 1919 թ. դեկտեմբերի վերջին կայացած հանդիպումներն ԱՄՆ-ի
պատերազմական նախարար Նյութոն Դ. Բեյքերի հետ³²: ԱՄՆ-ի կողմից
Հայաստանի Հանրապետությանը ռազմական օգնության ցուցաբերման
հարցն այդպես էլ դրական լուծում չստացավ:

32 Տե՛ս **Ճիզմեճեան Մ. Գ.**, նշվ. աշխ., էջ 417-419, **Հովհաննիսյան Ռ. Գ.**, նշվ. աշխ., էջ 464:

Հարկ է նշել նաև, որ ԱՄՆ-ից տնտեսական օգնություն ստանալու հարցը նույնպես զգալի արդյունքներ չունեցավ: Իրավիճակը նկարագրելու համար կարող ենք ընդամենը վկայաբերել գնդապետ Ու. Հասկելի՝ 1919 թ. օգոստոսին Երևանում արտասանած ճառից մի հատված. «Դրամական օժանդակություն Ամերիկյան չի տա, քանի հոգատարության հարցը որոշված չէ»³³: Այն է՝ ինչպես նախկինում, ԱՄՆ-ի քաղաքականությունը ՀՀ-ի հանդեպ դրսևորվում էր միայն մարդասիրական՝ նպաստամատույց գործողություններով:

Եզրակացություններ

Այսպիսով՝ ԱՄՆ-ի կողմից Հայաստանի Հանրապետությանը ռազմական օգնության ցուցաբերման հարցը, որն արդիական էր 1919 թվականին՝ հատկապես աշնանը, նույն տարվա դեկտեմբերին արդեն կարելի էր ամբողջությամբ փակված համարել:

Այն հարցը, թե ինչու ԱՄՆ-ի կողմից ՀՀ-ին ռազմական օգնության տրամադրման հարցը դրական լուծում չստացավ, իսկ մերժումն էլ ձգձգվեց ավելի քան կես տարի, բազմաթիվ մութ կետեր է պարունակում: Այսպես՝ բանաձևը քննարկող ենթահանձնաժողովի նախագահ Ու. Հարդինգը, զբաղված լինելով կայանալիք նախագահական ընտրություններով, մոռացության էր մատնել խնդրո առարկա հարցը: Պատճառ կարելի է համարել նաև նախագահ Վ. Վիլսոնի հիվանդությունը և աշնան ամիսներին պետական գործերից մեկուսացված լինելը: Ինչպես արձագանքում էր այդ օրերին հայկական մամուլը. «Նախագահ Ուիլսոնի հիւանդութիւնը աղէտ մըն է մեր դատին համար»³⁴: Այլ տարբերակ է ենթադրում այն հիմնավոր կարծիքը, թե անհաջողությունների պատճառն ԱՄՆ վարչակազմում ընթացող միջկուսակցական պայքարն էր և հենց նախագահ Վ. Վիլսոնի ու նրա ձեռնարկների դեմ ուղղված՝ մեծամասնություն կազմող հանրապետականների դժգոհությունները: Բացասական զգալի դեր կարող էր ունենալ նաև Զ. Հարբորդի ներկայացրած՝ ոչ հայկական խնդրի օգտին վկայող գեկուցագիրը, որը «ջուր էր լցնում վիլսոնյան քաղաքականության թշնամիների ջրաղացին»³⁵: Այն թեպետև ԱՄՆ պետքարտուղարություն էր հանձնվել հոկտեմբերի 16-ին, բայց չէր ներկայացվել Սենատին ու չէր քննարկվել ոչ 1919 թ. վերջին, ոչ էլ 1920 թ.:

Վերը ներկայացված փաստերն ու հանգամանքներն ուղղակիորեն և անուղղակիորեն իրենց դերը խաղացին խնդրո առարկա հարցի տապալ-

33 Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 321:

34 «Հայաստան», 1919, 11 հոկտեմբերի, N 8, էջ 76:

35 Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 365:

ման մեջ, սակայն, կարծում ենք, որ մերժման բուն հիմքերն այլ էին՝ **ավելի բարդ և խոր:**

- Առաջին աշխարհամարտի վերջին շրջանում ԱՄՆ-ն ոչ վերջնակա-նապես, սակայն մի կողմ էր դրել իր «փայլուն մեկուսացման» քաղաքա-կանությունը և Եվրոպա-Արևելք պատմական զարգացումների հարթակում «ուշացած», բայց և այնպես ակտիվ մասնակցություն էր դրսևորել: Խաղա-ղության վեհաժողովի աշխատանքների ընթացքում ամերիկացիները շա-հագրգռված էին նախ և առաջ ամրագրելու այդ դերակատարումն ու դուրս չմնալու միջազգային քաղաքական գործընթացներից և այդ նպա-տակին էին ծառայեցնում մանդատների, մասնավորապես՝ Հայաստանի մանդատի հարցը: **Սակայն ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության տե-սանկյունից նման չափավոր դերակատարությունը չէր ենթադրում ռազմական օգնության հարցի՝ հայության շահերից բխող դրական լուծում:**

- 1919 թ. նոյեմբերի 19-ին ԱՄՆ Սենատը մերժեց Վերսալի հաշտու-թյան պայմանագիրը, ուստիև դրա բաղկացուցիչ մասը կազմող Ազգերի լիգայի կանոնադրությունը: Մերժելով կանոնադրությունը՝ ԱՄՆ-ն մերժեց նաև Ազգերի լիգայի մանդատային համակարգը՝ ՀՀ-ի համար դրանից բխող բոլոր անբարենպաստ հետևանքներով: Եվ քանի որ ԱՄՆ վարչա-կազմը հենց ստորագրման պահից՝ 1919 թ. հունիսի 28-ից, հիմնականում դեմ էր «Վերսալին», նշանակում է՝ վերսալյան պայմանագրի ստորագրու-մից հետո Հայաստանի մանդատի հարցն իրականում այլևս գոյություն չու-նե՞ր ԱՄՆ-ի համար: **Հետևապես պետք է, որ փակված համարվեին նաև այդ շրջանակներում ՀՀ-ին ռազմական օգնություն ցուցաբերելու հարցն ու դրա շուրջ բոլոր տեսակի քննարկումները:**

- Հայաստանին ռազմական օգնություն ցուցաբերելու հարցին ԱՄՆ-ի բացահայտ բացասական պատասխանի բացակայությունը, ավելի ճիշտ՝ դրա հետևողական ձգձգումը, նույնպես պատահականություն չէր և ոչ էլ «քաղաքականության տատանում»: Այն հստակ մշակված արտաքին քաղա-քական դիրքորոշման մաս էր, ըստ որի՝ ուսումնասիրվող ժամանակահատ-վածում ռազմական միջամտությունն ի պաշտպանություն հայերի ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության օրակարգից դուրս էր: Ավելին՝ 1919 թ. աշ-նանից ամերիկյան պետական այրերի քաղաքական տրամադրություններում փոփոխությունների միտումներ էին նկատվում, այն է՝ վերադարձ նախկին «մեկուսացմանը»՝ Եվրոպայի գործերին չմիջամտելու քաղաքականությանը: Միացյալ Նահանգների՝ հօգուտ հայության վճռականորեն հանդես գալն անհավանական էր նաև այն պատճառով, որ Թուրքիայի վերաբերյալ ԱՄՆ-ի քաղաքական դիրքորոշումը դեռևս վերջնական հաշվեկշռի չէր բերվել: **Նման «չձևավորված» դիրքորոշումը, մեր կարծիքով, անմիջականորեն**

կապված էր ԱՄՆ-ի արևելյան քաղաքականության վրա հաղթանակած տերությունների, մասնավորապես՝ Մեծ Բրիտանիայի, մասամբ նաև Ֆրանսիայի քաղաքականության մեջ կատարվող խորքային տեղաշարժերի կանխորոշող ազդեցության հետ³⁶:

- Խնդրո առարկա ժամանակահատվածում ՀՀ-ի հանդեպ ԱՄՆ-ի քաղաքականությունը նրա ավելի լայն քաղաքական գծի վեկտորներից մեկն էր, ուստիև այն շարունակում էր կրել միմիայն մարդասիրական բնույթ և սահմանափակվում էր նպաստամատույց գործունեությամբ: **ԱՄՆ-ն թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական առումով իրականում վարում էր չեզոք քաղաքականություն:** Թե ինչ բացասական հետևանքներով էր հղի ԱՄՆ վարչակազմի կողմից Հայաստանին ռազմական աջակցության ձգձգումը և ապա մերժումը, բացահայտորեն պիտի երևար հաջորդ՝ 1920 թ. աշնանը:

Արմենուհի Վ. Ղամբարյան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են հայ-ամերիկյան, հայ-բրիտանական հարաբերությունները XX դ. սկզբին: Հեղինակ է 1 մենագրության, 3 ուսումնական ձեռնարկի և շուրջ 40 հոդվածի:

Էլ. huugte` vanarmin@mail.ru

Summary

THE QUESTION OF PROVIDING MILITARY ASSISTANCE TO THE REPUBLIC OF ARMENIA BY THE UNITED STATES OF AMERICA IN 1919

Armenuhi V. Ghambaryan
Candidate of Sciences in History

Key words - Republic of Armenia, USA, President, Prime Minister, commander, senator, Senate, resolution, hearings, politics, peace, mandate, mission, conference, aid committee, League of Nations.

Резюме The end of the First World War inspired great hopes in the Armenians scattered all over the world, and especially in the newly created Republic of Armenia. The Armenians were eagerly awaiting the decisions of the conference on the problems of the post-war world, hoping that the allies would

36 Այս մասին վերջերս հետաքրքիր փաստեր է բացահայտել իրանահայ պատմագետ **Կարեն Հ. Խանլարյանը** իրանցի դիվանագետ **Սուհամնեղ Ալի Ֆորուշիի** 2015 թ. Թեիրանում պարսկերենով լույս տեսած «Փարիզի խաղաղության վեհաժողովի օրագրությունների» ուսումնասիրության միջոցով: Ավելի մանրամասն տես **Կարեն Հ. Խանլարյան**, Հայաստանի Հանրապետության անկման խորքային պատճառները, «Վեմ», 2018, N 4, էջ 416-431:

provide an opportunity for a just solution of the Armenian question – the liberation of all Armenian lands and the establishment of a united and independent Armenia. Without the help of the victorious Powers, it was also impossible to fulfill the key tasks facing the government of the young Republic – protecting the country from external and internal enemies, ensuring the physical existence of the people and solving the food problem. Most Armenians were convinced that the United States would lead their liberation and reconstruction.

However, the historical events of 1919 confirmed that the Great Powers, regardless of the ongoing geopolitical changes, as before, guided by their own interests, continued, if not forget, then to push into the background their “concerns” about the fate of the Armenians and gradually forget the promises and readiness provide the necessary assistance. The actions of the United States in this case practically did not differ from the positions of other Powers. Moreover, if the allies openly distanced themselves from the solution of the Armenian question and leaving the latter to the United States, offered the Americans the mandate for Armenia, the United States acted contradictory manifestations. On the one hand, the Americans expressed interest in seeing the Armenian people free and independent, on the other hand, with regard to the Armenians and, in particular, in the issue of the mandate, they pursued a “passive” and “undefined” policy. Thus, in the studied period of time, it becomes pointless to wait for decisive actions on the part of the United States - in terms of political or military intervention in favor of the Armenians in general and the Republic of Armenia in particular. By the end of the summer of 1919, with the withdrawal of British troops from the Caucasus and, in particular, from Armenia, when the situation in Armenia became critical, the only hope was the United States. However, the petitions and statements of the Armenians about the provision of military assistance, the dispatch of troops, weapons and ammunition to Armenia remained unanswered by the United States.

The efforts of the civil and military missions of the Republic of Armenia that left for the United States in the autumn of 1919 with petitions and the hope that Congress would agree to first send small troops to Armenia to ensure control over the roads delivering aid through the territory of Georgia, then recognizes the Republic of Armenia and, in the end, will accept the mandate of Armenia. The above mentioned points were also included in the resolution of Senator J. Sh. Williams, submitted to the US Senate, on the provision of military assistance to the Republic of Armenia. The hearings of a special subcommittee on this issue, created by the Senate Foreign Relations Committee, held from September 27 to October 10, were in fact unsuccessful. The issue of military assistance to Armenia from the United States did not receive a positive decision, and the refusal dragged on for more than six months – until mid of May 1920.

The reality that the United States did not openly respond to the provision of military assistance to Armenia, or, rather, consistently delayed a negative response, was neither an accident nor a “political hesitation”. The US policy towards Armenia was one of the vectors of a specially developed political line “Europe-East”, according to which military-state intervention in the protection of Armenians during the mentioned period was actually not on the agenda. In fact, the United States pursued a neutral policy – both economically and politically and even officially – de jure did not recognize the Republic of Armenia.

Резюме

ВОПРОС ПРЕДОСТАВЛЕНИЯ ВОЕННОЙ ПОМОЩИ РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ СОЕДИНЕННЫМИ ШТАТАМИ В 1919 ГОДУ

Арменуи В. Гамбарян
Кандидат ист. наук

Ключевые слова – Республика Армения, США, президент, премьер-министр, полководец, сенатор, Сенат, резолюция, слушания, политика, мир, мандат, миссия, конференция, комитет помощи, Лига Наций.

Окончание Первой мировой войны вселило большие надежды в разбросанных по всему миру армян и, особенно, проживающих в новосозданной Республике Армения. Армяне с нетерпением ждали решений конференции по проблемам послевоенного мира, надеясь, что союзники предоставят возможность для справедливого решения Армянского вопроса – освобождения армянских земель и создания единой, независимой Армении. Без помощи держав-победительниц невозможно было выполнить ключевые задачи, стоящие перед правительством молодой республики – защитить страну от внешних и внутренних врагов, обеспечить физическое существование народа и решить продовольственную проблему. Большинство армян были убеждены, что именно Соединенные Штаты возглавят дело их освобождения и восстановления.

Однако исторические события 1919 года подтвердили, что великие державы, независимо от происходящих геополитических изменений, как и прежде, руководствуясь своими интересами, продолжали если не предавать забвению, то отодвигать на задний план свои «беспокойства» относительно

судьбы армян и постепенно забывать данные обещания и готовность обеспечить необходимую помощь. Действия США практически не отличались от позиций других держав. Более того, если их союзники открыто отдаляли себя от решения Армянского вопроса, оставляя его Соединенным Штатам и предлагая американцам мандат Армении, то США действовали противоречиво. С одной стороны, американцы выражали заинтересованность видеть армянский народ свободным и независимым, с другой – по отношению к армянам и, в частности, в вопросе мандата, вели «пассивную» и «неопределенную» политику. Соответственно, в исследуемый период времени, постепенно становилось бессмысленным ждать со стороны США решительных действий – в плане политического или военного вмешательства в пользу армян в целом и Республики Армения в частности. Между тем к концу лета 1919 года, в условиях вывода британских войск с Кавказа и, в частности, из Армении, когда ситуация в Республике стала критической, единственной надеждой армян были США.

Однако петиции и заявления армян о предоставлении военной помощи, отправке войск, оружия и боеприпасов в Армению остались без ответа со стороны США. Не имели результатов также усилия гражданской и военной миссий Республики Армения, отправившихся в США осенью 1919 года с прошениями и надеждой на то, что конгресс США согласится сначала отправить в Армению малочисленные войска для обеспечения контроля над дорогами, доставляющими помощь через территорию Грузии, затем признает Республику Армения и, в конце концов, примет мандат Армении. Отмеченные выше пункты были включены также в представленную сенату США резолюцию сенатора Дж. Ш. Вильямса о предоставлении военной помощи Республике Армения. Состоявшиеся в период с 27 сентября по 10 октября слушания специальной подкомиссии по данному вопросу, созданной комиссией по внешним отношениям сената, на самом деле были безрезультатными. Вопрос военной помощи Армении со стороны США не получил положительного решения, а отказ затянулся более чем на полгода – до середины мая 1920 года.

Тот факт, что США не отвечали открыто на вопрос по поводу оказания военной помощи Армении, или, вернее, последовательно затягивали отрицательный ответ, не было ни случайностью, ни «политическим колебанием». Политика США по отношению к Армении была одним из векторов специально разработанной политической линии «Европа-Восток», согласно которой военно-государственное вмешательство в защиту армян в этот сложный период фактически не входило в повестку дня. По сути, США

проводили нейтральную политику – как в экономическом, так и в военно-политическом плане.

REFERENCES

1. “Aragats”, K. Polis, 1919, N 36 **(In Armenian)**.
2. “Hayastan”, 1919, 11 hoktemberi, N 8 **(In Armenian)**.
3. **Aharonyan A.**, Sardarapatits‘ minch‘ev Sevr yev Lozan, k‘aghak‘akan ėragir 1919-1927, Yer., YEPH hrat., 2001 **(In Armenian)**.
4. Armenija v dokumentax gosudarstvennogo departamenta SSHA 1917-1920 g.g., sost. I per. **Maxmurjan G. G.**, Jer., 2011 **(In Russian)**.
5. **Chizmĕchean M. G.**, Patmut‘iwn amerikahay k‘aghak‘akan kusakts‘ut‘eants‘ (1890-1925), Frĕzno, 1930 **(In Armenian)**.
6. **Galoyan G. A.**, Hayastanĕ yev mets terut‘yunnerĕ 1917-1923 t‘t‘., Yer., 1999 **(In Armenian)**.
7. **Ghambaryan A. V.**, G. P‘astrmarchyani haghordumĕ AMN Senati artak‘in haraberut‘yunneri handznazhoghovi yent‘ahandznazhoghovum (hoktember, 1919 t‘.), “Region I mir”, Jer., 2020 **(In Armenian and In Russian)**.
8. **Ghambaryan A. V.**, H. K‘ajaznunu haghordumĕ AMN Senati artak‘in haraberut‘yunneri handznazhoghovi yent‘ahandznazhoghovum (hoktember, 1919 t‘.), “Patmabanasirakan handes”, Yer., 2019, N 3 **(In Armenian)**.
9. **HAA**, f. 370, ts‘. 370, g. 63, t‘. 3 **(In Armenian)**.
10. **HAA**, f. 370, ts‘. 370, g. 63, t‘. 4 **(In Armenian)**.
11. Hayastanĕ mijazgayin divanagitut‘yan yev sovetakan artak‘in k‘aghak‘akanut‘yan p‘astat‘ghat‘erum (1828-1923 t‘t‘.), khmb. J. **Kirakosyan**, Yer., 1972 **(In Armenian)**.
12. **Hovhannisyan R. G.**, Hayastani Hanrapetut‘yun, Versalits‘-London 1919-1920, hat. II, Yer., 2014 **(In Armenian)**.
13. **Maxmurjan G. G.**, Armenija v politike SSHA 1917-1923, Jer., 2018 **(In Russian)**.
14. **Ovannisjan R. G.**, Mezhdunarodnyje otnoshenija Respubliki Armenija, 1918-1920 g.g., Jer., 2007 **(In Russian)**.
15. **Simonyan H. R.**, Andraniki zhamanakĕ, girk‘ B, Yer., 1996 **(In Armenian)**.
16. **Virabyan V.**, Haykakan banaki hamar zenk‘-zinamt‘erk‘i hayt‘ayt‘umĕ 1918-1920 t‘t‘., “Patmut‘yun yev mshakuyt‘”, Yer., YEPH hrat., 2019, N 2 **(In Armenian)**.
17. **Vrats‘yan S.**, Hayastani Hanrapetut‘yun, Yer., 1998 **(In Armenian)**.